ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ 21/22

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 26 մայիսի 2022թ.

Կոռուպցիայի կանխարգելման Հանձնաժողովը, կազմով՝ Հայկուհի Հարությունյանի, Նարեկ Համբարձումյանի, Արամայիս Փաշինյանի, և Մարիամ Գալստյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), 2022 թվականի մայիսի 26-ին քննելով ՀՀ վարչական դատարանի դատավոր Ռոբերտ Վարդանի Մաքեյանի կողմից հայտարարագրման ենթակա տվյալը «Հայտարարատու պաշտոնատար անձի 2020 թվականի գույքի, եկամուտների և շահերի» տարեկան հայտարարագրում ոչ ամբողջական ներկայացնելու փաստի առթիվ 2022 թվականի մայիսի 19-ի թիվ ՎԻՎ 21/22 որոշմամբ հարուցված վարչական իրավախախտման վերաբերյալ գործը.

ՊԱՐԶԵՑ

1.Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.

1.1 Հանձնաժողովը, 2020 թվականի մարտի 25-ի ընդունված «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-199-Ն օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Կոռուպցիայի

165

կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 25-րդ հոդվածով սահմանված կարգով, իրականացնելով դատավորների հայտարարագրերի վերլուծություն, պարզել է, որ Ռոբերտ Վարդանի Մաքեյանը 2021 թվականի մայիսի 27-ին ներկայացված «Հայտարարատու պաշտոնատար անձի 2020 թվականի գույքի, եկամուտների և շահերի» տարեկան հայտարարագրում (այսուհետ՝ Հայտարարագիր) հայտարարագրել է 16.04.2012 թվականից իրեն պատկանող MERCEDES-BENZ 320E մակնիշի մարդատար տրանսպորտային միջոցի օտարում՝ 1,700,000 (մեկ միլիոն յոթ հարյուր հազար) ՀՀ դրամ արժեքով, սակայն նշված գույքի օտարումից ստացված եկամուտը Հայտարարագրում՝ Գ.1 «Հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անչափահաս անդամների և խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձանց եկամուտները» բաժնում չի հայտարարագրել, ինչի առնչությամբ 2022 թվականի մայիսի 19-ին հարուցվել է թիվ ՎԻՎ 21/22 վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը:

1.2 Հանձնաժողովը 2022 թվականի ապրիլի 22-ին Ռոբերտ Մաքեյանին է հասցեագրել թիվ 01/721/1-2022 գրությունը Հայտարարագրում վերլուծության արդյունքում հայտնաբերված անհամապատասխանությունների, այդ թվում նաև վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու հիմք հանդիսացած անհամապատասխանության վերաբերյալ՝ խնդրելով գրությունը ստանալուց հետո 10-օրյա ժամկետում ներկայացնել պարզաբանում վերլուծության արդյունքում հայտնաբերված և գրությամբ ներկայացված անհամապատասխանությունների վերաբերյալ:

1.3 Հանձնաժողովը 2022 թվականի մայիսի 4-ին Ռոբերտ Մաքեյանին է հասցեագրել թիվ 01/836-2022 ծանուցումը Հայտարարագրում հայտնաբերված վերոշարադրյալ անհամապատասխանության վերաբերյալ՝ հրավիրելով 2022 թվականի մայիսի 19-ին վերջինիս ներկայությամբ կազմելու վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն:

1.4 Ռոբերտ Մաքեյանը 2022 թվականի մայիսի 13-ին Մ-1301-2022 մտից գրությամբ Հանձնաժողով է ներկայացրել թիվ 01/721/1-2022 գրությունում նշված անհամապատասխանությունների վերաբերյալ գրավոր պարզաբանում, որով ներկայացրել է նաև վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի հիմքում ընկած

166

անհամապատասխանության վերաբերյալ պարզաբանում՝ կից ուղարկելով նաև 22.06.2020 թվականի տրանսպորտային միջոցի առուվաճառքի պայմանագրի պատճենը:

1.5 2022 թվականի մայիսի 19-ին կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ 19/22 արձանագրությունը՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշով:

1.6 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունը նշանակվել է 2022 թվականի մայիսի 26-ին, որն իրականացվել է Ռոբերտ Մաքեյանի մասնակցությամբ:

2. Վարույթի մասնակցի բացատրությունը.

Ռոբերտ Մաքեյանն իր գրավոր դիրքորոշմամբ, մասնավորապես, հայտնել է, որ «Mercedes Benz 320 E» մակնիշի տրանսպորտային միջոցի օտարման վերաբերյալ տեղեկատվությունը հայտարարագրել է Հայտարարագրի 9-րդ քայլում՝ «Տվյալ տարում օտարվել է տրանսպորտային միջոց» բաժնում, որտեղ մանրամասն նկարագրված են օտարման ամսաթիվը, արժեքը, արժույթը, գործարքի մյուս կողմում հանդես եկող անձի տվյալները: Վաճառքի գումարը գնորդ Վոլոդյա Խորենի Հակոբյանի որդու՝ Հարություն Վոլոդյայի Հակոբյանի կողմից մուտքագրվել է իր հաշվեհամարին:

Ռոբերտ Մաքեյանը նշել է նաև այն, որ նկատի ունենալով, որ «Mercedes Benz 320 E» մակնիշի տրանսպորտային միջոցի օտարման և ստացված եկամուտի վերաբերյալ տեղեկատվությունը արդեն իսկ հայտարարագրել է Հայտարարագրի 9-րդ քայլում, ուստի չիմանալով, որ այն ենթակա է պարտադիր հայտարարագրման նաև Հայտարարագրի «Գ.1 «Հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անչափահաս անդամների և խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձանց եկամուտները» բաժնում, չի նշել: Կարծում է, որ իր կողմից, ըստ էության, որևէ վարչական իրավախախտում թույլ չի տրվել, քանզի տվյալ տեղեկատվությունը արդեն իսկ նշվել է Հայտարարագրի 9-րդ քայլում:

Նշված դիրքորոշումը Ռոբերտ Մաքեյանը պնդել է նաև գործի քննության ընթացքում:

16

3. Գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքները.

Հանձնաժողովն, ուսումնասիրելով և վերլուծելով գործում առկա նյութերը, կատարելով գործի հանգամանքների համակողմանի քննություն, հաստատված է համարում հետևյալը.

Ռոբերտ Վարդանի Մաքեյանը Հայտարարագրում հայտարարագրել է 16.04.2012 թվականից իրեն պատկանող MERCEDES-BENZ 320E մակնիշի մարդատար տրանսպորտային միջոցի օտարում՝ 1,700,000 (մեկ միլիոն յոթ հարյուր հազար) ՀՀ դրամ արժեքով, սակայն նշված գույքի օտարումից ստացված եկամուտը Հայտարարագրում՝ Գ.1 «Հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անչափահաս անդամների և խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձանց եկամուտները» բաժնում չի հայտարարագրել, հետևաբար, Ռոբերտ Մաքեյանի Հայտարարագրում առկա է *ոչ ամբողջական ներկայացված տվյալ*:

4. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը, հիմնավորումները և պատճառաբանությունը:

4.1 Ռոբերտ Մաքեյանը «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 34-րդ հոդվածի համաձայն հանդիսանում է գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրման պարտականություն ունեցող անձ:

4.2 Օրենքի 40-րդ հոդվածի (մինչև ՀՕ 51-Ն օրենքի 17.02.2021 թվականին ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ) 4-րդ մասի համաձայն՝ տարեկան հայտարարագրում երառվում են նաև տվյալ տարվա (հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ) ընթացքում հայտարարագրման ենթակա անշարժ գույք, տրանսպորտի միջոց, թանկարժեք գույք ձեռք բերելու կամ օտարելու գործարքները՝ նշելով գույքի տեսակը, ձեռք բերելու կամ օտարելու օրը, ամիսը, տարին, եղանակը, արժեքը (գինը), արժույթը, գործարքի մյուս կողմի անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը, հասցեն:

4.3 Օրենքի (մինչև ՀՕ 51-Ն օրենքի 17.02.2021 թվականին ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ) 41-րդ հոդվածի 4-րդ մասի 12-րդ կետի համաձայն՝ հայտարարագրման ենթակա է Հայաստանի Հանրապետության դրամով, արտարժույթով կամ բնամթերային (ոչ դրամական) ձևով ստացված գույքը (նաև հայտարարագրման ոչ ենթակա) օտարելուց

168

ստացված եկամուտը, իսկ նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Եկամուտը հայտարարագրելիս նշվում են՝ 1) եկամտի տեսակը, 2) եկամտի ստացման աղբյուրը՝ եկամուտ վճարողի անվանումը կամ ազգանունը, անունը և հայրանունը, հասցեն, 3) եկամտի չափը (գումարը), 4) եկամտի արժույթը:

4.4 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը քննում և լուծում է հայտարարագրմանն առնչվող խախտումների վերաբերյալ գործեր:

4.5 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.6 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքով 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը (պաշտոնատար անձը) **ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա**, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.7 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, ***այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին սակա հանգամանքները:***

4.8 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:

4.9 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը

169

(պաշտոնատար անձը) ընդունում է գործի վարույթը կարճելու մասին որոշում (----) բանավոր դիտողություն հայտարարելու դեպքում:

Հանձնաժողովը, համադրելով գործում առկա փաստական հանգամանքները դրանց նկատմամբ կիրառելի իրավական նորմերի պահանջների հետ, հաստատված է համարում, որ անզգուշությամբ կատարվել է խախտում, այն է՝

ՀՀ վարչական դատարանի դատավոր Ռոբերտ Վարդանի Մաքեյանը Հայտարարագրում հայտարարագրել է 16.04.2012 թվականից իրեն պատկանող MERCEDES-BENZ 320E մակնիշի մարդատար տրանսպորտային միջոցի օտարում՝ 1,700,000 (մեկ միլիոն յոթ հարյուր հազար) ՀՀ դրամ արժեքով, սակայն նշված գույքի օտարումից ստացված եկամուտը Հայտարարագրում՝ Գ.1 «Հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անչափահաս անդամների և խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձանց սկամուտները» բաժնում չի հայտարարագրել: Նշված արարքը հանդիսանում է վարչական զանցանք՝ հիմք ընդունելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին պարբերությամբ սահմանված իրավակարգավորումը (հայտարարատուի կողմից հայտարարագրում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելը):

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 21-րդ հոդվածը սահմանել է, որ եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:

Արարքի նվազ նշանակությունը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ թեև ձևականորեն արարքը կարող է պարունակել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով» սահմանված արարքի հատկանիշներ, սակայն ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը այնպիսի էական վնաս չի պատճառվել, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը դիտարկվի համաչափ:

Նվազ կարևորությունը կիրառելիս անհրաժեշտ է հաշվի առնել խախտման բնույթը, դրա որակական կողմը, ինչպես նաև խախտում թույլ տված անձի վերաբերմունքը խախտման նկատմամբ:

180

Հանձնաժողովն արձանագրում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.28-րդ հոդվածը նպատակ է հետապնդում ապահովել պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) հանրային հաշվետվողականությունը, վերջինիս հանրային գործունեության նկատմամբ վստահությունը, պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեությունը:

Խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել, թե արդյոք այդ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների բուն էության խաթարմանը: Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը:

Սույն գործով Հանձնաժողովն արձանագրում է, որ Ռոբերտ Վարդանի Մաքեյանի կողմից տրանսպորտային միջոցի օտարման վերաբերյալ տվյալները «Բ.2.2. Տվյալ տարվա ընթացքում ձեռք բերված և օտարված տրանսպորտի միջոցը» բաժնում ամբողջական կերպով արդեն իսկ ներկայացվել են, հետևաբար առկա են օտարված տրանսպորտային միջոցի գործարքի ***վերաբերյալ անհրաժեշտ տվյալները, դրանք են՝ գույքի տեսակը, ձեռք բերելու կամ օտարելու օրը, ամիսը, տարին, եղանակը, արժեքը (գինը), արժույթը, գործարքի մյուս կողմի անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը, հասցեն***: Նշված հանգամանքը հաշվի առնելով, երբ «Գ.1. հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անչափահաս անդամների և խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձանց եկամուտները» բաժնում տրանսպորտային միջոցի օրատումից ծագած եկամտի դեպքում ՝Դթակա են հայտարագրման եկամտի տեսակը, եկամտի ստացման աղբյուրը՝ եկամուտ վճարողի անվանումը կամ ազգանունը, անունը և հայրանունը, հասցեն, եկամուտ վճարողի և նրանց միջև առկա կապի բնույթի մասին տեղեկատվություն, եկամտի չափը (գումարը), եկամտի արժույթը, Հանձնաժողովն արձանագրում է, որ բովանդակային առումով այդ տվյալներն արդեն իսկ ներկայացվել են Հայտարարագրի են «Բ.2.2. Տվյալ տարվա ընթացքում ձեռք բերված և օտարված տրանսպորտի միջոցը» բաժնում:

Նման պայմաններում անձի արարքով վնասակար հետևանք չի առաջացել, և գործի փաստական տվյալներով հաստատված է, որ իրավախախտը նպատակ չի ունեցել վնասակար հետևանք պատճառելու:

171

Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները, Հանձնաժողովը գտնում է, որ Ռոբերտ Մաքեյանի կողմից կատարված խախտումը հանրային վտանգավորության տեսակետից ունի նվազ նշանակություն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 21-րդ հոդվածով, Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Ռոբերտ Մաքեյանին ազատել վարչական պատասխանատվությունից՝ հայտարարելով նախնավոր դիտողություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ռոբերտ Մաքեյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:
3. Որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Ռոբերտ Մաքեյանին տրամադրել եռօրյա ժամկետ՝ «Հայտարարատու պաշտոնատար անձի 2020 թվականի գույքի, եկամուտների և շահերի» հայտարարագրի համապատասխան բաժնում ուղղում կատարելու համար:
4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ՀԱՅԿՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ